# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 22383; (010)250519 artashatmeria@artashat.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 5049-Ա**

## «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետով, «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ծածկագրով հրավերի /այսուհետ՝ Հրավեր/ առաջին մասի 8.15 կետով, հիմք ընդունելով «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետև՝ Հանձնաժողով/ 2025թ դեկտեմբերի 12-ի թիվ 4-րդ արձանագրության թիվ 10 և 31 որոշումները, ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ.**

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01 | 50 | խնձոր | 11 893 500 | Ռուզ-Մարտի ՍՊԸ | 03810239 | ք Մասիս, Ն-Թ 6 Շ ԲՆ 40 | 12.12.2025թ. | Արտաշատի համայնքապետարան | Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ՝ Խախտել | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | նման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:<br><br>Գնահատող հանձնաժողովի 2025թ դեկտեմբերի 10-ի 3-րդ արձանագրությամբ արձանագրվել է՝ Ռուզ-Մարտի ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: ՀՀ կառավար | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակցին Ռուզ-Մարտի ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:<br><br>Մասնակցին՝ Ռուզ-Մարտի ՍՊԸ -ին համակարգի միջոցով պատշաճ ծանուցվել է անհամապատասխանությունների մասին: Մասնակից | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ը՝ Ռուզ-Մարտի ՍՊԸ -ն<br><br>շտկել է մասնակի, անհամապատասխանությունները՝ որը հանգեցրել է ՝գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: | |

2.Ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին որոշման կայացման հաջորդ օրը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 26
ք.Արտաշատ